դնում, «համը տեսնելոէ համար եւ մի կտոր իր թաշկինակի մէջ էր դնում, տուն տանելու «նմուշի» համար: Այդ բոլորը կատարւում էր կտուրների վրայ, այդ օդային հրապարակում:

Ես ցած իջայ կտուրներից, մտայ նրանց տակ ծածկոած չարշին: Դա մի ամբողջ լաբիւրինթոս էր, որ տարածւում էր դէպի զանազան կողմեր: Չարշիների աջ եւ ձախ կողմում, մինը միւսի մօտ, շարքով ձգւում էին զանազան վաճառքներով լի կրպակներ, խանութներ, որոնք շինոած էին քարից եւ փոքրիկ մատուռների նմանութիւն ունէին: Ծալապատիկ նստած էին վաճառականները մինդարների վրայ եւ գնողներին, հաճոյական ձայներով ու խօսքերով, դէպի իրանց խանութն էին հրաւիրում: Առեւտուրը իր ջերմ կենդանութեան մէջ էր: Բաղէշը իր շրջակայ գաւառների վաճառականական կենտրոնն է: Նա յարաբերութիւն ունի Վանի, Կարինի, Բալոի, Բուլանխի, Տարօնի, Սղերդի, Ամիդի, մինչեւ անգամ Մուսուլի եւ Բաղդադի հետ: Բամբակը ստանում է Պարսկաստանից եւ իր մէջ արդիւնագործելով՝ չիթեր, կտաւներ, շիլաներ պատրաստելով, լիացնում է իր շրջակայ գաւառները: Եւրոպական ապրանքներ նա ստանում է Կ. Պոլսից: Վաճառականութիւնը գլխաւորապէս հայերի ձեռքումն է, եւ նրանց նիւթական վիճակը կարելի է բարւոք դրութեան մէջ համարել: Բայց իմ ուշադրութիւնը գրաւեցին մի քանի այլ երեւոյթներ: Մի տեղ փոքրիկ աշակերտը, չոքած իր «ուստայի» առջեւ եւ գոց ժամագիրքը ձեռքում բռնած, իր «համարն» էր տալիս: «ուստան», երկաթեայ արշինը ձեռքում, մի կողմից չափում էր կտաւը եւ խօսում էր քրդի հետ, միւս կողմից, նոյն երկաթեայ արշինով խփում էր փոքրիկ ուսանողի գլխին, որ իր սխալը ուղղէ: Մի այլ տեղ, խանութպանը դրել էր իր առջեւ Նիւ – Եօրքում տպած աշխարհաբար աստոածաշունչը, մի կողմից սակարկութիւններ էր անում իր գնողների հետ, միւս կողմից վիճում էր մի քանի անձանց հետ, թէ պահեցողութիւնը չէ կարող քաւել մարդու մեղքերը: Ես մօտեցայ այդ վերջիններին: Չգիտեմ, որտեղի՞ց յայտնոեցաւ այնտեղ եւ հաջի Իսաղը: Լսելով, թէ վէճը ինչումն է, նա ասաց.

– Պահեցողութիւնը պէտք է հոգեւոր լինի, դու հեռու պահիր քեզ սուտ խօսելուց, սուտ երդոելուց, գողանալուց, զրպարտելուց, ագահութիւնից, ժլատութիւնից եւ այլ մեղքերից, այն ժամանակ տիրոջ թողութիւնը կը վայելես, եթէ ոչ, թէ միս կերար, թէ լոբիայ կերար, բոլորը միեւնոյն է:

Եւ այդ ասում էր ո՞վ, հաջի Իսաղը՞...

Ես հեռացայ:

Ծածկոած չարշիները լոյս ընդունում էին առաստաղից: Բայց լոյսը այնքան նոազ էր, որ մարդ մարդու հազիւ կարողանում էր տեսնել: Խանութ-